

ԿԱՐԳ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Եվրասիա միջազգային համալսարանը /այսուհետ՝ Համալսարան/ սույն կարգով սահմանում և լուծում է Համալսարանի ուսանողների կողմից բողոքների ներկայացման, դրանց քննարկման և լուծման կարգը:

1.2. Համալսարանը սույն կարգով սահմանված խնդիրների լուծումը իրականացնում է ՀՀ օրենսդրության, Համալսարանի կանոնադրության հիման վրա:

2. Գնահատականների բողոքարկումը.

2.1. Ուսանողն իրավունք ունի գրավոր բողոքարկել գրավոր աշխատանքի գնահատականը, աշխատանքի անցկացումից հետո 10 օրվա ընթացքում՝ տեղեկացվելուց և աշխատանքի արդյունքը քննարկելուց հետո:

2.2. Բողոքարկման դեպքում ուսանողը լրացնում է և ֆակուլտետի դեկանին է ներկայացնում բողոքարկման թերթիկը:

2.3. Դեկանը բողոքարկման թերթիկը ուղարկում է ամբիոն՝ քննարկման համար:

2.4. Բողոքարկված տետրն անցնում է քննարկման հետևյալ փուլերը.

2.4.1. վերանայում և վերագնահատում ամբիոնում՝ ռեկտորատի հաստատած հանձնաժողովի կողմից,

2.4.2. հանձնաժողովի գրավոր կարծիքի ներկայացումը, քննարկումը և հիմնավորումը ուսանողի հետ, ամբիոնի վարիչի մասնակցությամբ /ամբիոնում/:

2.5. Բողոքարկված տետրը ռեկտորատի որոշմամբ երկրորդ անգամ կարող է ուղարկվել վերագնահատման:

2.6. Քննարկման գործընթացը ամբիոնում պետք է իրականացվի բողոքարկման պահից սկսած 2 օրվա ընթացքում:

2.7. Բողոքարկման արդյունքում փոփոխված գնահատականը հաստատվում է բողոքարկման ամբիոնային հանձնաժողովի անդամների ստորագրությամբ:

2.8. Բողոքարկման արդյունքում փոփոխված գնահատականն արձանագրվում է դեկանատի կողմից տրված ուղեգրում:

2.9. Բողոքարկման արդյունքում գնահատականը կարող է նաև իջեցվել:

3. Ուսանողների այլ բողոքների քննարկումը.

3.1. ցանկացած այլ հարցով /տեխնիկական, պրոֆեսորադասախոսական կազմի/ ուսանողների կողմից բողոքներ լինելու դեպքում դրանք քննվում են Համալսարանի դեկանատի կազմի կողմից, ըստ պաշտոնների աստիճանային հերթականության,

3.2. համալսարանի ուսանողների այլ բողոքները /որոնք գնահատականներին չեն վերաբերում / առաջին անգամ քննվում են ամբիոնում,

3.3. այն դեպքում, երբ ուսանողը չի համաձայնում բերված բողոքի վերաբերյալ կայացված որոշման հետ, իրավունք ունի այն բողոքարկել դեկանատ:

3.4. բողոքի արդյունքի վերաբերյալ դեկանի կողմից կայացված որոշումները բողոքարկման ենթակա են պրոռեկտորին կամ ռեկտորին: Ռեկտորի կողմից կայացված որոշումները կարող են բողոքարկվել միայն դատական կարգով: